

աչքերիս լուս տաս: Կատարելապէս արողջանալու համար այս ուխտագնացութիւնը կրկնում են եօթը անգամ:

Նոյն Ղուլալիի ս. Ստեփաննոս ուխտատեղին ուխտ են զընում հասակ առած և «տանը մնացած» աղջիկները, եօթն անգամ, առաւօտները շատ վաղ, աւելում, մաքրում ուխտատեղին և խընդրում, որ իրենց փակ բաղդը բաց անի, մի լաւ փեսացու տայ:

Կորուստիան սուրբ Մինաս.—Նրբ մի որև է բան են կորցնում, գտնելու համար աղօթում են յատկապէս կորուստիան (կորուստը հանող, գտնող) սուրբ Մինասին, և ի սէր այդ սրբի, քանի դեռ կորուստը չէ գտնուել՝ գիշերները մինչև լոյս ճրագը վառ են պահում:

Թալալոց.—Գիւղալգարա գիւղում, գերեզմանատան գլխին կայ մի խարխուլ մատուռ, որ «Թալալոց» է կոչւում: Այստեղ ուխտ են բերում «թալցնող»—ուշագնաց լինող—երեսաներին, ուր նրանց հագի շապիկը ձղում են, երկու կտոր անում, և այնտեղ, ուխտատեղիում թողնում, որպէս զի երեսայի այդ հիւանդութիւնն էլ շապիկի հետ միասին այնտեղ մնայ:

Պոռաւի վանք.—Քիւսածեղ գիւղից փոքր ինչ բարձր, լեռան լանջին կայ մի փոքրիկ, զմբեթազարդ եկեղեցի, որի մօտ՝ մի հասարակ գերեզման: Աւանդաբար պատմւում է, թէ այդտեղ Թաղուած է այն բարեպաշտ պառաւը, որ իլիկ մանելով փող է վաստակել և այս վանքը կառուցել, որի պատճառով էլ կոչւում է Պոռաւի կամ Իլիկի վանք: Վանքը այժմ կիսաւեր է, սակայն բաղմամբիւ ուխտաւորներ ունի, մանաւանդ ջերմ հիւանդութեամբ տառապողներ, որոնց անմիջապէս բժշկում է:

Չ Ա Ր Ո Գ Ի Ն Ե Ր

Ջուր.—Այսպէս կոչւում են այն ոգիները՝ որոնք գալիս են նորածին երեխաներին յափշտակելու: Սրանք միշտ լաւ հաջնուած կանանց կերպարանքով են երևում:

Գաթուլ.—Սրանք ախոռի (թաւլի) ոգիներ են, որոնք միշտ ախոռումն են մնում և երբէք դուրս չեն գալիս: Երևում են սև զոմշուկի կերպարանքով, միայն անմարմին են, սոսկ ստուեր և չեն բռնում:

Ստոմաներ.—Նոր-Բայազէտցիները երեւեակալում են, որ սատանաները մարդակերպ են, միայն եօթը եղջիւր և եօթը պոչ ունեն, ոտների կրունկներն էլ առաջն են գտնուում, ճիշտ մերի հակառակը: Նրանք երկու սեռի են և բազմանում են ծննդաբերութեամբ, միայն անմահ են, ծնունդը չի մեռնում: Նրանք ապրում են կամ առանձին առանձին, կամ ամբողջ խմբով—«եղնաղով» ա-

ռաւելապէս այրերում, քարափներում, ջրաղացներում, ձիթեհանքներում, ճահիճներում, աղբրի ակի մէջ: Նրանք կազմում են երեք թագաւորութիւն՝ Սաղայէլ, Սանդարամէր և Բէլիար թագաւորներով:

Նրանք մարդկանց շատ անգամ երևում են, սակայն միշտ ոչ իրենց իսկական կերպարանքով, այլ մարդու, այն էլ ծանօթ կամ ազգականի, այս պատճառով էլ տանում հազնում են մարդկանց այն նոր հանդերձները, որոնց վրայ ասեղ չէ շուլուլած կամ նշխարք դրած: Երբեմն էլ կատուի, շան, իշի, թռչունի, և այլն կերպարանք են մտնում:

Սատանաները մարդկային ցեղին թշնամի են և աշխատում են մոլորեցնել, մեղքի մէջ ձգել, վախեցնել մարդկանց: Այս նպատակով շատ անգամ նրանք աներևոյթաբար մտնում են մարդկանց բնակարանները, կանգնում շէմքի վրայ, պահ մտնում մութ անկիւններում, նստում կտրանք, մտնում գոմը և հեծնելով ձիերը՝ երկար արշաւում գոմի մէջ, նրանց արեան, քրտնքի մէջ կոխում, վերջն էլ բաշն ու պոչը հիւսում և հեռանում:

Մարդիկ սրանցից խուսափելու համար երկու միջոց ունեն, խաչակնքուել և Յիսուս Քրիստոս ասել, երկրորդ՝ իրեն մօտ ասեղ պահել կամ այդ ասեղը եթէ կարող են, նրանց մարմնի մէջ շուլուլել: Վերջին դէպքումս նրանք այլևս չեն կարողանում հեռանալ այդպէս անողից և նրա հլու հպատակն են դառնում: Միայն ինչ որ նա ասում է՝ նրա հակառակն են կատարում: Է՛հ, խելացի բռնողն էլ ցանկացածի հակառակն է հրամայում:

Այժմ թուհնք այն տեղերը, որ յայտնի են իր սատանաների բնակարանների և յառաջ բերենք նրանց մասին եղած աւանդութիւնները:

Ղուլալի գիւղի մօտ՝ Տիկնածորում, մի քարափի մէջ մի ծակ կայ, որի միջից, ասում են, մի անցք ձգւում է մինչև Ղըշլաղ գիւղը, մօտ 3 կիլոմետր երկարութեամբ: Այս անցքն ամբողջովին բռնուած է սատանաներով: Երբ մարդիկ գիշերներն անցնում են Տիկնածորով, լսում են աղմուկ, իրարանցում, դառուլ-զուռնի, ծափի և խաղի ձայներ: Մի անգամ մի գիւղացի իւր շան հետ այս ձորով անցնելիս շունը մտել է այս անցքը, և թէպէտ տէրը շատ կանչել է նրան, սակայն նա չի վերադարձել: Մի քանի օրից նա տէրը գտնում է նրա գիւղի Ղըշլաղ գիւղի դաշտում, առանց գլխի:

Նոյն, Ղուլալի, գիւղի մօտ, Խազնի ձորում, որ նոյնպէս սատանաների բնակավայր է համարւում, Զգմաչոնց Զէյրաբը տաւար էր արածացնում, յանկարծ Մանուշարի հովտի կողմից հար-

աանիքի աղմուկի ձայն է լսում: Մտածում է, որ զնայտեսնի թէ ինչ է: Դեռ չը հասած՝ հանդիպում է իւր քրոջը, որ յայտնում է թէ իրենց հարսանիքն է, ինքն էլ եկել է նրան տանելու: Գնում են. սա տեսնում է, որ յիրաւի, մի մեծ հարսանիք է, ուտում են, խմում, պարում, հարսն ու փեսան էլ մէջ տեղում կանգնած են: Սրան լաւ ընդունում են և սկսում հիւրասիրել: Մէկ էլ մինը վեր է կենում ասում, թէ նախ այս եկած մարդը պիտի քնի մեր հարսի մօտ, որ հողածնից սերունդ ունենանք: Այս խօսքի վրայ Ձէյրարը սաստիկ դարձանում է, որովհետեւ հարսնքաւորները բոլորն էլ իւր ծանօթներն են թւում, բոլորն էլ իւր համազիրկացիները, մինչդեռ իրենց սովորութիւնների մէջ չկայ՝ որ փեսայի փոխարէն մի ուրիշը քնէր հարսի մօտ: Այս միջոցին այն կինը, որ Ձէյրարին բերել էր, ընդիմանում է այդ առաջարկութեան և ասում. «Դուք առիթ զնա աղբօրդ բեր՝ ես էլ զնացի բերի, ինչպէս որ բերի, այնպէս էլ կը տանեմ, և թոյլ չեմ տալ, որ ձեռք տաք, և սկսում է իւր մարմնով պաշտպանել նրան և ասել. Աղբէր ջան, առաջ ինձ կսպանեն, յետոյ քեզ:» Ձէյրարը վախից ուշագնաց է լինում: Երբ ուշքի է գալիս և աչքը բաց անում, նայում տեսնում է, որ ճշ հարս կայ և ճշ հարսնեւոր, միայն այդ կինն է նստած իւր մօտ: Նա ասում է. «Դէհ, վեր կաց զնա, միայն յետ մի նայիր, ապա թէ ճշ բերանդ ու աչքերդ կը ծռուեն» Այստեղ Ձէյրարը մտաբերում է գիշերուայ պատահածը և կռանում է, որ իւր ազատչի ոտները համբուրի՝ տեսնում է, որ սրա ոտները ծռւած են, այսինքն կրունկը առջևումն է, մատները յետևում. սարսափած Ձէյրարը ճշում է, իսկ կինն ասում է. «Ձէն մի հանիր, թէ չէ կը հաւաքուեն», ու ինքն էլ անհետանում է: Ձէյրարը վերադառնում է տուն, ընկնում անկողին. երկու ամիս շարունակ էլ սուրբ, էլ կախարդ չեն թողնում, մինչև որ կարողանում են առողջացնել: Երանոս գիւղի մօտն է «Դեի դարը», որ սատանաների կենդրոնաւեղին է համարւում: Սրա մօտով նոյն իսկ ցերեկները վախենում են անցնել, որովհետեւ սատանաները բռնում են տանում և՛ այնքան ծամածռութիւններ անում, նրա աղօթելուն, խաչակնքուելուն տնադ տալիս, որ սրտաճաղ են լինում:

Ջաղալու գիւղում կռապաշտական դամբաններից շատերը «սատանի տանիս» (տուն) են կոչւում, և լի են սատանաներով:

Նորագույն գիւղի մօտ, ծովափին, մի կլոր բլուր է բարձրանում, որ «Սարա դայա» է կոչւում, այս տեղ ևս սատանաներ են բնակւում:

Նորագույն գիւղում մի ժամանակ Սաղաթիկնց տունը կար: Այս գերդաստանի մօրը յաջողուել է սատանայ բռնել: Մի քանի

օր շարունակ նկատում են, որ գիշերները ձին գոմում այս ու այն կողմ է վազում, արիւն քրտինք մտնում: Բաշն ու պոշն էլ լուսադէմին իրենք իրենց հիւսւում են: Իսկոյն հասկանում են, որ անշուշտ սատանան է գալիս՝ նստում ձին, իրեն համար ման գալիս և վերջն էլ բաշն ու պոշը հիւսւում, հեռանում: Բերում ձիու մէջքին կուպր են քսում ու իրենք էլ թաք կենում: Կէս գիշերին մէկ էլ տեսնում են, որ մի սատանայ կկաւ, նստեց ձիու վրայ և էլ չկարողացաւ պոկ գալ: Իսկոյն տատը վրայ է հասնում և մի ասեղ շուլուլում նրա հագուստի մէջ: Յետոյ բռնում են նրան ու պոկում ձիու մէջքից: Տեսնում են, որ սա՝ մի գեղեցիկ, քոզը երեսին հարս է: Սա այլևս չի հեռանում սրանց տանից և եօթը տարի շարունակ ծառայում է: Միայն ինչ որ հրամայում են՝ սա հակառակն է անում, այս պատճառով էլ նրանք իրենց ցանկացածի հակառակն են հրամայում: Եօթը տարին լրանալուց յետ սա սաստիկ աղաչում է, որ ասեղը հանեն իւր վրայից և թողնեն իրեն ազատ: Սրանք համաձայնւում են, նախապէս խօսք առնելով, որ իրենց շօխտը պորտին՝ ֆլաս չտայ: Եւ երբ ասեղը հանում են, նա անմիջապէս անյայտանում է:

Ներքին Ատիեաման գիւղումն էլ մի կին գնում է գոմը գլուխը լուանալու, մէկ էլ տեսնում է՝ մի աղջիկ կկաւ և առաջարկեց գլուխը ջրհորի մօտ լուանալ: Պառան իսկոյն հասկանում է, որ սա սատանայ է, ասեղը շուլուլում է նրա հանգերձի մէջ: Եօթը տարի սրան բանեցնում են և ապա ասեղը հանելով՝ արձակում: Սա անիծում է, որ սրանց տանից աղքն անպակաս լինի: Եւ մինչև այժմ էլ սրանց տանից աղքն անպակաս է, չնայած որ շատ յաճախ աւելում են:

Մի սատանայ էլ Գիւղալդարայում են բռնել, որը ազատուելիս անիծել է, որ այս գերդաստանի մէջ որքան նոր աման գնեն, իսկոյն շուրթը կոտրուի: Եւ մինչև այժմ էլ այդպէս է լինում:

Նոր-Բայազէտցի Սև Ղազոն մի գիշեր ջրաղացում մենակ քնում է. առաւօտեան երբ տուն է գալիս նկատում են, որ երեսի և գլխի մի կողմն ամիլած է: Հետևեալ գիշերը Մինասնից Յովէն է գնում նոյն ջրաղացը և տեսնում է, որ թէև դուռը դրսից փակած է, միայն ներսից դուռը գուռնի ձայն է լսւում: Սատանաներից վախենալով սիրտ չի անում ներս մտնելու, թողնում փախչում է:

Կայծակի ժամանակ սատանաները գլխները կորցրած աշխատում են մարդկանց յետևում թաք կենալ, որովհետև այդ կայծակով Քրիստոս կամենում է խփել, ոչնչացնել իրենց. մարդկանց յետևը թաք կենալով նրանք յոյս ունեն, որ Քրիստոս՝ մեղքանա-

լով մարդկանց՝ չի խփիլ և նրանց էլ իրենց հետ սպանիլ: Սակայն Քրիստոս էլ միշտ չի խնայում, այս պատճառով էլ մարդիկ կայծակի ժամանակ շարունակ խաչակնքում են և Յիսուս Քրիստոս ասում, որպէսզի սատանաները իրենց մօտից հեռանան և իրենց վտանգի չհնթարկեն: Սատանաները դնում, մանում են քարերի տակ, այս պատճառով և զոհաւանում են նաև կայծակի ժամանակ քարերի, ժայռերի մօտենալ:

Պատահել է, որ այսպիսի որոտի ժամանակ սատանաները գնացել կանգնել են Սեանայ լճի վերայ, կարծելով որ այգտեղ միանգամայն ապահով կարող են լինել: Սակայն Քրիստոս ուղարկել է մի քանի հրեշտակներ՝ որոնք շղթայել են սատանաներին և կրկինք բարձրացրել: Շատերը տեսել են այդ, նոյն իսկ լսել շղթաների զնդզնդոցը: Ասում էին, թէ վիշապի նման էր, երկար պոչով, որը ինչու որ դիպչում էր՝ փշուր փշուր էր անում: Խօսակցութեան ժամանակ գործ են ածում հետևեալ դարձուածքները՝ ի նկատ առնելով սատանաների յատկութիւնները.

«Սատանից օխտ օր յառէջ ա հելէ».

«Սատանայ նալող (պայտող) ա».

«Փորը լիքը սատանայ ա».
այսինքն սաստիկ խորամանկ է:
«Սատանէն բանից խանեց».
այսինքն նա այն աստիճան անբարոյական չէր այդ անելու, սակայն սատանան ներշնչեց:

«Սատանի յանկաճը խուլ».
ասում են այն դէպքում, երբ չեն կամենում, որ իրանց ասելիքը սատանան լսի և կատարի. այսպէս օր. սատանի յանկաճը խուլ՝ էս տարի կարկուտ չեկաւ կամ Սատանի յանկաճը խուլ՝ երեխան կարող է օրօրոցից վայր ընկնել:

Երբ բարկանում են՝ ասում են. «Նալլաթ» (անէծք). չար սատանին», կամ «սատանէն ասում ա զան (խփիր)»...

Իսկ երբ ուղում են ասել, թէ խանգարում ես՝ ասում են. Սատանայ ես:

Զեռո.— Սրանք բարձր և բարակ ողիններ են, սպիտակ շապիկ հագած: Սրանք սատանաներից շատ բաներով տարբերում են. նախ նրանց պէս անմահ չեն, թէև նրանց պէս ծնւում են և բազմանում. նրանց պէս Աստծուն հակառակ չեն, այլ պաշտում են նրան. նրանց պէս չար չեն և շատանում են մարդկանց խափելով և ժանաւանդ հրապուրելով: Զմեռը բնակւում են մարդկանց բնակարաններում, իսկ գարնանը դնում են հանդերը: Փետրուարը նրանց ամիսն է կոչւում, որովհետև այդ ամիսն նրանց շարիւնը տաքանում է և նրանք էրօտիկ երազներով հրապուրում են մարդ-

կանց: Նրանց այս ամսին շարունակ դուրս ու ներս անելը ստիպում է կատուներին մլաւել, որովհետեւ տեսնում են սրանց:

Փետրուարի վերջին մարդիկ աշխատում են նրանց տանից դուրս անել, այս պատճառով էլ հորթի գեղմով (փոստ) խփում են պատերին և ասում.

Շւտը դուս.

Մարդը ներս:

Եւ որովհետեւ գոմերի շուտներն աւելի աներես են, տկճորի մէջ մանր քարեր են լցնում, և նրանով խփում տաւարին ու գոմի պատերին՝ վերոյիշեալ դարձուածքը կրկնելով:

Գրողի զգիր.—Մաստիկ պառաւած կանանցից ոմանք դառնում են «գրողի զգիր» ման են գալիս գրողի, հոգեառ հրեշտակի, հետցոյց տալիս մեռնելու դատապարտուածների տները և օգնում հոգի առնելիս: Գիշերները Գրողը գալիս վեր է կացնում այսպիսի կանանց և հետը տանում և թէպէտ այս նկատում են տնեցիք, սակայն զգուշանում են յայտնելու:

Գօռնադաք.—Առանց եկեղեցական ծիսակատարութեան թաղուած հայ մեռելը մասնաւորապէս և անհաւատ, թուրքերի մեռելներն ընդհանրապէս՝ նոր թաղուած միջոցին գիշերները շան կամ այլ կերպարանքով յարութիւն են առնում և շրջում գերեզմանատանը, լուսադէմին կրկին մտնում գերեզման և անշնչանում: Մի անգամ մինն անցնելով թուրքի գօռներով (գերեզմանատան մօտով), տեսնում է երկու շուն, և հետը տանում տուն: Առաւօտեան այդ շների փոխարէն տեսնում է երկու մեռել յատակի վրայ պառկած: Իմանալով, որ «գօռնադաք» է՝ տանում են կրկին թաղում և կրծքին մի մեծ մեխ խփում, որ այլ ևս չվերկենայ:

Ղոււի-Պարաբի մօտ էլ մի վարդապետ է «գօռնադաք» լինում և այդ կերպարանքով երևում մարդկանց: Մի անգամ Մաթոսի Գևոր էր տեսել նրան աւերակ եկեղեցու մօտ, խեղճը այնպէս էր վախեցել, որ բերանը ծռուել էր: Գիւղացիները շատ որոնել էին, որ գերեզմանը գտնեն, բանան և մի մեխ խփեն կրծքին, որ էլ գօռնադաք չլինի, բայց չէին գտել:

Կ Ա Խ Ա Ր Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. Հաւանմայութիւն.—Այս գաւառում ևս ծիծեռնակը, աղաւնին և կաշաղակն ընդհանրապէս համարում են բարեգուշակ, խակ բուն և ազաւուր՝ չարագուշակ: Բացի սրանից՝ գուշակութիւններ են անում նայելով թռչունների ա) գտնուած տեղին, բ) հանած ձայնին և գ) կատարած գործողութեան: